ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ք. Երևան, Մամիկոնյանց 46/5

« 12 » 12 20 24 թ. N 238-Լ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25-Ի ԹԻՎ 135-Լ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հանձնարարում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2022 թվականի օգոստոսի 25-ի «Հանրային քրեական հետապնդման ենթակա անձը հայտնի չլինելու դեպքերով, ինչպես նաև հանրային քրեական հետապնդման ժամկետները կասեցված քրեական վարույթների նախաքննությունը կազմակերպելու մասին» թիվ 135-Լ հանձնարարականում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 1-ին կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) սույն կետի 2-րդ ենթակետում նշված տեղեկանքները (այսուհետ՝ տեղեկանք) քրեական վարույթի նյութերի հետ ներկայացնել անմիջական վերադասի (ստորաբաժանման պետի կամ նրա տեղակալի՝ ըստ համակարգման ոլորտի) հաստատմանը.».

2) 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին և 4.2-րդ ենթակետերով.

«4.1) տեղեկանքն անմիջական վերադասի հաստատելուց հետո ներկայացնել ստորաբաժանման պետի վերահաստատմանը (եթե անմիջական վերադասը հանդիսանում է տվյալ ստորաբաժանման պետի տեղակալը).

4.2) ստորաբաժանման պետի կողմից տեղեկանքը վերահաստատելուց (կամ հաստատելուց) հետո՝ քրեական վարույթի նյութերը ստուգման նպատակով ներկայացնել հսկող դատախազին.».

3) 1-ին կետի 5-րդ ենթակետում «համապատասխան» բառից առաջ լրացնել «հսկող դատախազի կողմից ստուգվելուց հետո» բառերը.

4) 2-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) թերություններ չհայտնաբերելու դեպքում հաստատել տեղեկանքը, իսկ եթե անմիջական վերադասը հանդիսանում է տվյալ ստորաբաժանման պետի տեղակալը, ապա ներկայացնել այն ստորաբաժանման պետի վերահաստատմանը.»:

2. Սույն հանձնարարականն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին:

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ